Հարցում՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ

28.04.2011 12:41

Հարգելի փաստաբաններ.

ՀՀ փաստաբանների պալատը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ իրականացվող ծրագրի շրջանակում իրականացնում է հետազոտություններ, որոնք կապված են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման հարցի հետ:

Նշված ծրագրի շրջանակում փորձագիտական խմբին անհրաժեշտ է տեղեկատվություն ստանալ հետևյալի մասին. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների արդյունքում հաջողվել է վերականգնել դիմող քաղաքացու(ների) իրավունքներն ընդհանուր իրավասության դատարաններում:

Վերոհիշյալ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզապես էլեկտրոնային նամակ ուղարկել info@advocates.am հասցեին՝ նշելով ԱՅՈ և/կամ ՈՉ պատասխանները:

Դրական թե բացասական պատասխանների դեպքում էլ խնդրում ենք նաև զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարով՝ 56-07-76, 54-71-29 և/կամ պատասխան նամակ ուղարկել info@advocates.am էլեկտրոնային հասցեին:

Ձեր պատասխաններն առավելագույնս կնպաստեն հետազոտության իրականացման բարեհաջող ընթացքին: Ուստի խնդրում ենք լինել ակտիվ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })